«ԵՎՐԱՍԻԱ»-Ն ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

Ղարաբաղյան հակամարտության շուտափույթ կարգավորմանը

Երեւանում այցով գտնվող «Եվրասիա» հիմնադրամի նախագահ Ուիլյամ Մայնսի հետ հուլիսի 21-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ ՀՀ արտգործփոխնախարար Վարդան Օսկանյանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ ընթացող բանակցությունների արդի փուլը, ինչպես նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների դիրքորոշումները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությունների վերաբերյալ: Այս մասին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից:

Պրն. Մայնսը նշելով, որ հիմնադրամի ղեկավարությունը մեծ նշանակություն է տալիս հակամարտության շուտափույթ կարգավորմանը, վստահություն է հայտնել, որ խաղաղության հաստատումը մեծապես կնպաստի տարածաշրջանի պետությունների ժողովրդավարական կառույցների զարգացմանը եւ այդ երկրների տնտեսական վերելքին:

Նա ներկայացրել է «Եվրասիա» հիմնադրամի գործունեությունը նորանկախ պետություններում տնտեսական բարեփոխումներն ու ժողովրդավարությունը խթանելու ուղղությամբ: Որպես հիմնադրամի համար կարեւորագույն խնդիրներ, պրն. Մայնսը ընդգծել է մամուլի ազատության, գործարարության ոլորտում տեղեկատվության համակարգի զարգացմանն ու տարածաշրջանային համագործակցության խթանմանն ուղղված ծրագրերի իրագործումը:

Ն.Տ